

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻՆ

Հայրենի հանգուցեալ պատմաբան Պետրոս Յովհաննիսեանի (1944–2016) երախտաշատ աշխատանքին կը պարտինք մեր պատմագրութեան ու բանասիրութեան դասական դէմքերէն Նիկողայոս Ադոնցի բազմաթիւ գործերու յայտնաբերումը եւ երկերու ժողովածուին հրատարակ 1234 ութիւնը: Վերջինիս եօթներորդ հատորին մէջ, որ տրամադրուած է Ադոնցի նամականիին, յոյս տեսած են 135 նամակներ: Թէեւ նախաբանին մէջ Յովհաննիսեան յիշած է Աւետիք Իսահակեանը իբրեւ անոր թղթակիցներէն մէկը¹, նշանաւոր բանաստեղծին ուղղուած Ադոնցի նամակները դեռ կը մնան գտանելի:

Իսահակեանի ստորագրութիւնը կրող եւ 1920–30ական թուականներուն Ադոնցին ուղղուած չորս նամակներ պահպանուած են Համագգային Հայ Մշակութային Միութեան (Պէյ-րութ) գրական արխիւի Ն. Ադոնցի թողօնին մէջ², որոնք Պ. Յովհաննիսեան ամենայն հաւանականութեամբ տեսած էր իր պրպտումներուն ընթացքին, սակայն չէր հասցուցած հրատարակել: Այդ նամակները, որոնք կը հրապարակուին ստորեւ, կ'օգնեն Ադոնցի ու Իսահակեանի յարաբերութեան արդէն յայտնի պատկերին որոշ գիծեր աւելցնելու:

1889–1891ին Իսահակեան ու Ադոնց համատեղ ուսանած էին Գէորգեան ճեմարանի լսարանական բաժնին մէջ: Իսահակեան իր գիւղի՝ Ղազարապատի ջաղացքին յիշատակը ոգեկոչած է Հոկտեմբեր 1926ին՝ Հայաստանէն Ադոնցին գրած իր երկրորդ

1 ԱԴՈՆՑ, Ն., *Երկեր*, հտ. Է., ԵՊՀ, Երեւան, 2014, 6: Հատորի քովանդակութեան մէկնաժամանակ՝ Ադոնցի նամակագրութեան ընդհանուր քննարկի մը համար, տե՛ս DOLUKHANYAN, AELITA, *La correspondance de Nicolas Adonts*, ի «Բանբեր հայագիտութեան», 2 (2021), 187–196:

2 Համագգայինի գրական արխիւ, փրոֆ. Նիկողայոս Ադոնցի թողօն, պահարան Ե/Ա-8:

նամակին մէջ, ինչ որ ենթադրել կու տայ, որ այդ յուշը իրենց ուսանողական շրջանին կը վերաբերէր: Յարդ, անոնց կապին հիմնական աղբիւրը 1913-1929 ժամանակաշրջանի Իսահակեանի նամակներն են, որոնք ուղղուած են այլ հասցէատէրերու եւ լոյս տեսած բանաստեղծի երկերու վեցերորդ հատորին մէջ³: Հոն յիշուած են Իսահակեանի կողմէ Ադոնցին գրուած կամ գրուելիք նամակներ, որոնք մեզի հասած չեն:

1913ի ամբան, Իսահակեան կը գտնուէր Զուիցերիոյ սահմանակից Փրանսական Գոլոնթ գիւղաքաղաքը (Օթ-Սափուա գաւառ), ուրկէ 12 եւ 30 Օգոստոսին Վենետիկ գտնուող Գարեգին Լեւոնեանին գրած է ու անոր միջոցով՝ բարեւներ յղած Ադոնցին, որ այդ ժամանակ իտալական քաղաքը կը գտնուէր՝ պրպտումներ կատարելով Միսթարեաններու Ս. Ղազարի վանքին մէջ⁴: 5 Հոկտեմբերին, նոյն նամակագրին խոստացած է, որ չուտով նամակ պիտի գրէ Ադոնցին⁵, որմէ 30 Նոյեմբերին ստացած է 100 ռուբլի (530 Փրանք)⁶:

Ըստ երեւոյթին, 1916-1917ին, Ս. Փեթերպուրկ բնակող Ադոնցը ծրագրած էր վերադառնալ Իսահակեանի Աբու-Լալա Մահարիի վիպերգը, որուն մասին բանաստեղծը որոշ ակնարկութիւններ բրած է Լեւոնեանին: Արդարեւ, 1916-1921ին ժրնեւ ապրող Իսահակեանը 8 Դեկտեմբեր 1916ին դարձեալ գրած է Գ. Լեւոնեանին՝ Թիֆլիս. «Պրոֆ. Ադոնցին գրեցի, որ, եթէ հնարաւոր է Աբու-Լալան լոյս ընծայել՝ ուղարկեմ նորը. սպասում եմ պատասխանի»⁷: Մարտ 28 1917ին կը գրէ. «Աբու-Լալա Մահարին» խնդրեմ առայժմ չտպէս. սրբագրութիւններ եմ արել. այդ առթիւ գրեցի ե՛ւ Ադոնցին. կամ սրբագրուածը կ'ուղարկեմ, կամ հետս կը բերեմ»⁸:

1920ին, Ադոնց մեկնած է Ս. Փեթերպուրկէն եւ անցած Եւրոպա, հաստատուելով նախ Լոնտոն (1920-1921) եւ ապա Փա-

3 Ուշադրութեան արժանի է վերջերս լոյս տեսած մամակներու հատորը, որ հեռու է մամակահին ամբողջացնելէ (*Աւետիք Իսահակեանի մամակները*, կազմեց՝ ԱԻԵՏԻՍԵԱՆ, Արփիկ, ԵՊՀ, Երեւան 2016):

4 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻԵՏԻՓ, *Երկերի ժողովածու*, հտ. Զ., «Սովետական գրող», Երեւան 1979, 138-139:

5 Անդ, 141:

6 Անդ, 142:

7 Անդ, 166:

8 Անդ, 170: Այդ ակնարկը քերեսս վիպերգը Լեւոնեանի *Գեղարուեստ* հանդէսին մէջ հրատարակելու մասին էր:

րիզ (1921–1931), ուր Իսահակեան, որ 1921ին Վենետիկ փոխադրուած էր, ստորեւ հրատարակուող առաջին նամակը յղած է 1925ին: Անկէ առաջ, Դեկտեմբեր 1924ին, Սիմոն Վրացեանին գրած էր, թէ «տնտեսական կացութիւնս օր օրի վրայ վատանում է. ինձ օգնող բարեկամս անվերջ չի կարող շարունակել. Իսկ նրա օգնութիւնից դուրս ուրիշ զգալի հասոյթներ չունեմ (...)»⁹: Վերոյիշեալ բարեկամը Պաքուի նաւթարդիւնաբերութեան երբեմնի տիրական ղեմքերէն մեծահարուստ Աբրահամ Ղուկասեանն էր (Ղուկասով, 1872–1969), որուն «նիւթական անշահախնդիր աջակցութեան շնորհիւ ապրում էր տանկի պայմաններում»¹⁰: Վենետիկեան տարիներուն ականարկելով, Վիզէն Իսահակեան վկայած է հօր մասին. «Ասեմ, որ Ղուկասովը հօրս ճանաչում էր դեռ Բաֆուից՝ 1903–1910 թթ., գնահատում նրա ստեղծագործութիւնները եւ որպէս մեկնեալ նիւթական օգնութիւն էր ցոյց տուել եւ նորից ուզում էր օգնել»¹¹: 1917ին, Ա. Ղուկասեան, որ ընտանեկան գործերը վարած էր արտասահմանի մէջ, իր եղբայրներուն հետ գաղթած էր Փարիզ: Հոն յաջողած էր վերականգնել իր տնտեսական գործունէութիւնը, հիմնելով նաւթատար նաւերու շինարարական ընկերութիւն մը: Միաժամանակ, Ղուկասեան եղբայրները աշխոյժ մասնակցութիւն բերած էին Թորկիրումի (Առեւտուրի, Ելեւստից եւ ճարտարուեստական յանձնախումբ) գործունէութեան, որ ստեղծուած էր ռուս վտարանդի սեփականատէրերուն եւ գործարարներուն շահերու պաշտպանութեան համար: Ղուկասեան նաեւ հակախորհրդային պայքարին մէջ գործօն դեր ստանձնած էր իբրեւ Վոզրոժդենիէ ռուսերէն վտարանդի թերթին (1925–1940) հիմնադիրն ու հրատարակիչը¹²:

9 ՎՐԱՑԵԱՆ, Ա., Հիմ քղթեր նոր պատմութեան համար, տպ. «Մշակ», Պէյրութ 1962, 363:

10 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Պ., Վիթիարի գործունէութիւն. պրոֆեսոր Նիկոլայոս Ադոնցի ծննդեան 140-ամեակի առիթով, ի «Սիւնեաց երկիր», 18 Հոկտեմբեր 2011, 6: Ղուկասեանը զարմիկն էր Ադոնցի կնոջ՝ օփերայի երգչուհի Օլգա Յովնաթանեան-Ադոնցի:

11 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Վ., Հայրս, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», Երևան 2000, 127:

12 Ծիրվանգադէ Բնադատած է Ա. Ղուկասեանի «այդ փաղափական պայքարի մէջ վերին աստիճանի պլանդակ դեր»ը եւ «զազրկի արարք»ը առանց անուն տալու (ԾԻՐՎԱՆՑԱՒԷ, Ի՞նչ անուն տալ, ի «Երևան» 8 Նոյեմբեր 1925, 1): Վոզրոժդենիէի մասին, տե՛ս RAEFF MARC, *Russia Abroad: A Cultural History of the Russian Emigration, 1919–1939*, Oxford University Press, New York–Oxford 1990, 83–84:

1926ին փոխադրուելով Փարիզ, Իսահակեան 9 Փետրուարին գրած է Վենետիկ մնացած իր կնոջ (որդին՝ Վիզենը, տակաւին ուսանող էր «Մուրատ-Ռափայէլեան» վարժարանին մէջ), թէ Ադոնց պաղ ընդունելութիւն ցուցաբերած էր իրեն եւ չէր ուզած միջնորդել Ղուկասեանի քով, ու աւելցուցած, թէ ինք կը մերժէ «նրանց թերթին գրել»¹³։ Իսահակեան արդէն նմանօրինակ մերժումով դիմաւորած էր Յովհաննէս Զաւրեանի (Զաւրիւն, 1869-1945) նոյն առաջարկը։ «Զաւրիւնը հօրս տեղեկացրեց Ղուկասովի առաջարկներին. գալ Փարիզ աշխատակցելու իր “Վոգրոժդենիէ” թերթին, որն ի դէպ ուսւ վտարանդիութեան հիմնական ամբիոնն էր եւ, որ կարելոք էր՝ տպագրուել իրենց պատկանող հրատարակչական հաստատութիւնում։ (...) Հայրս քաղաքավարի կերպով մերժեց այս գայթակղիչ առաջարկը։ Եթէ համաձայնուէր, կը նշանակէր ընդմիջտ կտրուել Հայաստանից, այրել կամուրջները եւ հրաժարուել իր այնքան սիրելի Գիւմրի վերադառնալու մտքից»¹⁴։ Ադոնցի հետ վերստին հանդիպելէ ետք, Իսահակեան կնոջ հաղորդած է 25 Փետրուարին, թէ դիմած էր գումար մը ձեռք բերելու (անշուշտ՝ Ղուկասեանէն, Ադոնցի միջնորդութեամբ), եւ ան խոստացած էր մտածել այդ մասին։ Միւս կողմէ, դիտել տուած է, թէ «Ադոնցի թերթի գործը գլուխ գալու քան չէ»¹⁵։

Նոյն տարին, Սոֆիա Իսահակեան փոխադրուած է Փարիզ, իսկ Իսահակեան մեկնած է Հայաստան։ Երեւանէն գրած է մեր հրատարակած երկրորդ նամակը, Լենինականի երկրաշարժէն օրեր ետք, աղէտեալ երկրին օգնութեան հասնելու դիմումով։ Գրեթէ միաժամանակ, 29 Հոկտեմբերին, Փարիզի Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը խորհրդակցական ժողով մը գումարած էր Փարիզի մէջ, շուրջ 25 հանրային դէմքերու, հայրենակցական միութիւններու ներկայացուցիչներու եւ այլոց ներկայութեամբ՝ աղէտեալներուն օժանդակութիւնը կազմակերպելու համար։ Ժողովը միաձայնութեամբ շարք մը որոշումներ առած էր, պաշտօն տալով Ալեքսանդր Խատիսեանին, տոքթ. Վահրամ Թորգոմեանին, Արշակ Խան Գորոյեանին եւ Նիկողայոս

13 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա., *Երկերի ժողովածու*, նշ. աշխ., 219։

14 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Վ., *Հայրս*, նշ. աշխ., 127-128, 353-354։ Զաւրեան ամուսնացած էր Ղուկասեանի քրոջ աղջկան՝ Նունէ Բեգլարեանի հետ։

15 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա., *Երկերի ժողովածու*, նշ. աշխ., 223-224։ Նոյն նամակին մէջ, Իսահակեան նշած է, թէ Ղուկասեան չէր քաջալերել Փարիզ հաստատուիլը։ «[Ա.]սում է կը ծուլանաս, քան չես գրի, իսկ ես ապրեցնում եմ քեզ, որ գրես – “Ուստա Կարոն” գրես»։

Ադոնցին «ամփիջապէս ձեռնարկներ կատարել այս որոշումներու հիման վրայ»¹⁶:

Այնուհետեւ, 7 Դեկտեմբերին, Խաչակեան Երեւանէն գրած է կնոջ.

«Երեւանը ունի չափազանց հարուստ գրադարաններ. ազգային¹⁷, համալսարանի, Էջմիածնի:

Յետոյ, շա՛տ հաճելի կեանք կայ Երեւանում, շա՛տ ընտիր, բարձր հասարակութիւն: Ես շա՛տ սիրուած եմ ու յարգուած: Կառավարութիւնը ամէն դիրքութիւն է տալիս ինձ երկիրն ու ժողովուրդը ճանաչելու: Սա իմ տեղն է ու իմ տարերքը: Ի՞նչ պիտի անեմ Եւրոպայում: Զգուել եմ ու երբեք փափաք չունիմ նորից այնտեղ ձանձրանալու, բայց երբ պէտք կը լինի գալու, Վիգէնին համալսարան դնելու համար կամ այլ անհրաժեշտ գործի համար, իսկոյն կարող եմ գալ. դրա մասին մի՛ մտածիր: Աշխատիր Վիգէնի համար համալսարան մտնելու ստիպենդիա¹⁸ ճարել, որովհետեւ ես դեռ չեմ կարող ձեզ դրամ ուղարկել, շա՛տ եմ ծանրաբեռնուած: (...)

(...) [Դ]ու Վիգէնի հարցը լուծիր մեր բարեկամների՝ Արրահամի եւ Ադոնցի միջոցով. քէն դեռ ժամանակ կայ, բայց այդ ուղղութեամբ գործիր»¹⁹:

23 Յունուար 1927ին, Խաչակեան յայտնած է կնոջ, թէ «այսօր-վաղը նամակներ կը գրեմ Պ. Մակինցեանին, Գեղամին, Ադոնցին»²⁰: Ադոնցին կնոջ միջոցով բարեւներ յղելէ ետք Փետրուարին ու Մայիսին (վերջին անգամ՝ «Նիկոլա» անունին տակ)²¹, Յունիս ծին գրած է, թէ «Նիկոլային մանրամասն նամակ եմ գրում, որ վաղը կը վերջացնեմ»²²: Յայտնի է, թէ յիշեալ նամակ-

16 «Հ. Հ. Պատուիրակութեան ձեռնարկները», ի «Յառաջ», 31 Հոկտեմբեր 1926:

17 Կ'ակնարկէ Հայաստանի պետական հանրային գրադարանին (1921-1946), որ 1946ին ստացած է Ալեքսանդր Միսանիկեանի անունը մինչեւ 1990, երբ դարձաւ «Հայաստանի Ազգային Գրադարան»:

18 Ռուսերէն. стипендия - կրթաթոշակ:

19 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա., *Նրկերի ժողովածու, նշ. աշխ.*, 238: Նամակի վերջաւորութեան բարեւներ յղած է Ադոնցին, ի շարս այլոց:

20 Անդ, 241: Գեղամ Կոստանեանը Իսահակեանի մօրաբոլոր որդին էր:

21 Անդ, 243, 247: Հաւանաբար, ապահովութեան նկատառումներով է, որ այսուհետեւ Ադոնցը միշտ յիշած է «Նիկոլա» ձեռով:

22 Անդ, 248:

ները գրուած են: Սեպտեմբեր 3ին, Սոֆիային ու Վիգէնին յղուած նամակին մէջ, խօսքը կնոջ ուղղելով գրած է. «Իսկ ստիպենդիան, պիտի խնդրես Նիկոլային, որ մեր բարեկամին հասկացնէ, որ ես այստեղ ոսկու հանք չեմ գտել, որ վերաս պարտք կայ եղբորս կնոջն ու որդուն օգնել, իսկ ձեզ կարող եմ ուղարկել ամսական 30 դոլլար. այնպէս որ նա գոնեա պիտի բարի լինի յանձն առնել Վիգէնի կրթութեան մասին, մի քանի տարի, վճարելով այնքան, որքան նա հիմա տալիս է քեզ, նախկին տուածի կէսը, ոչ թէ դէկտեմբերին վերջացնէ, այլ շարունակէ. շա՛տ եմ խնդրում այդ ձեռով խնդիրը լուծել: Եթէ Վիգէնի ուսման փողը լինի, մնացածը դիւրին է, ես կը լրացնեմ: Ուրեմն թող Վիգէնին առնի իր ուսանողների թուի մէջ: Այս մասին խնդրում եմ ե՛ւ Նիկոլային»²³: «Մեր բարեկամին» ըսելով, անշուշտ, Իսահակեան ակնարկած էր Ա. Ղուկասեանին: Հայաստանէն վերադարձին, վերջինս զայն տեսակցութեան հրաւիրած է, բայց դժգոհութեամբ ընդունած անոր հայաստանեան տպաւորութիւնները. «Սառն էին բաժանուել, հրաժեշտ տալիս Ղուկասովը հագիւ երկու մատ էր մեկնել հօրս»²⁴: Ըստ Վրացեանի ծանօթագրութեան, Ղուկասեան «մերժեց Աւետիքին նպաստը շարունակել, վերջինիս բոլշեւիկների հանդէպ ցոյց տուած բարեացակամ վերաբերումի հետեւանալով»²⁵:

1927-1929ին կնոջ հասցէագրուած յաջորդ եօթը նամակներուն մէջ, Իսահակեան բարեւներ ղրկած է «Նիկոլային»²⁶: Աղոնցի հետ կապուած վերջին ակնարկութիւնը կը գտնենք 5 Մարտ 1929ի նամակին մէջ, ուր Սոֆիա եւ Վիգէն Իսահակեաններուն գրած է, թէ Էջմիածնի մէջ հանդիպած էր Աղոնցի քրոջ՝ Շուշանիկ Սարգսեանին, որ տեղեկութիւններ հարցուցած էր եղբօր մասին, խնդրելով, որ նամակ գրէ²⁷:

Իսահակեան Աղոնցի հետ անձնական կապը վերահաստատած է 1930ին, երբ Հայաստանէն վերադարձած է Փարիզ, ուր մնացած է մինչեւ վերջնական ներգաղթը 1936ին: Վիգէն Իսահակեան վկայած է. «Հայրս Փարիզում, որը երիտասարդ տարիներին շատ էր սիրել, վերստին գտաւ իր սովորութիւնները: Գտաւ իր

23 Անդ, 249-250:

24 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Վ., Հայրս, մշ. աշխ., 354-355:

25 ՎՐԱՑԵԱՆ, Ս., Հիմ քոքեր, մշ. աշխ., 363:

26 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա., Երկերի ժողովածու, մշ. աշխ., 252-253, 257, 259, 261, 263, 271:

27 Անդ, 273:

բազմաթիւ բարեկամ մարդկանց՝ Նիկողայոս Ադոնցին, Արշակ Զօպանեանին, իր քնոուն՝ Եպիսկոպոս Արսէն Ղլտնեանին, արուեստագէտներ Յակոբ Գիւրջեանին, Սարգիս Խաչատրեանին, Երուանդ Քոչարին, Ժընեւի իր լաւ բարեկամ Արամ Տէր-Օհանեանին, բժշկապետ Թորգոմեանին եւ շատ ուրիշների»²⁸:

Յայտնի փաստ է, որ Ն. Ադոնց նախագահ ընտրուած էր 1928ին հիմնուած Փարիզի Հայ Գրական Ակումբին, որ նաեւ ծանօթ էր Հայ Գրական Միութիւնն անունով, եւ լայն գործունէութիւն կը ծաւալէր, համախմբելով բոլոր ուղղութիւններէ գրողներ, արուեստագէտներ եւ հետազոտողներ²⁹: Հոկտեմբեր 1930ին, Իսահակեան, Վահան Թէքէեան եւ Ղեւոնդ Մելոյեան չրջաբերական նամակ մը յղած են Ադոնցին, զինք հրաւիրելով Հայ Գրական Ընկերութեան մը հիմնադիր ժողովին նոյն ամսուն 13ին: Նամակը գրուած էր արեւմտահայերէն եւ կը կրէ Իսահակեանի ստորագրութիւնն ալ, թէեւ բնականաբար ո՛չ անոր կողմէ գրուած է եւ ո՛չ ալ իր ձեռքով արտագրուած: Ֆրանսահայ մամուլին մէջ որեւէ լրատուութեան չենք հանդիպած այդ ժողովին մասին, եւ տարօրինակ է, որ Հայ Գրական Միութեան առընթեր, Հայ Գրական Ընկերութեան մը հիմնադրութեան նախաձեռնութիւնը գոյութիւն ունենար:

Իսահակեանէն մեզի հասած վերջին նամակը գրուած է Յունուար 1932ին: Նոյեմբեր 1931ին պայմանագիր կնքելէ ետք, Ադոնց հաստատուած էր Պելճիքայի մայրաքաղաքը իբրեւ տեղւոյն Ազատ Համալսարանի (*Université Libre de Bruxelles*) հայագիտութեան ամպիոնի վարիչ: Այս պաշտօնը պիտի վարէր մինչեւ մահը:

Այս նամակին մէջ, Իսահակեան արտայայտուած է Հայաստան վերադառնալու մասին, ինչպէս 1930-1936 շրջանի բազմաթիւ այլ նամակներու մէջ, գործնական բնոյթի ինչ-ինչ տատամսումներով: Նաեւ ցոյց տուած է իր նախկին կուսակցութեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան հանդէպ ունեցած երկդիմի կեցուածքը, իր խորտակուած կեանքը վերագրելով «հայ բուրժուազիայի ընչաքաղցութեան եւ Դաշնակցութեան լուրջագոյութեան, արկածախնդրութեան», առանց մանրամասնելու նման արտայայտութիւններու հիմնաւորումին մասին:

28 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Վ., Հայրս, նշ. աշխ., 355-356:

29 ԿԱՐԱՊԵԱՆ, Ռ., Փարիզի Հայ Գրական Միութիւնը, ի «Հայրենիք», 27 Փետրուար 1931, 1:

Նամակներուն բնագիրները նոյնութեամբ կը հրատարակենք՝ անհրաժեշտ ծանօթագրութիւններով: Շնորհակալութիւն կը յայտնենք Համազգայինի գրական արխիւի պատասխանատուներուն (Պէյրութ), որոնք Աղոնցի Փոնտի նիւթերուն ծանօթանալու ամէն գիւրութիւն ընծայեցին:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Ա.

Վենետիկ, 3 յուլիսի, 1925

Սիրելի Նիկողայոս,

Վերջին տարիներս, շնորհիւ պատերազմի ու իր վերիվայրումների մի տեսակ վայրենացում է մտել մարդկանց փոխյարաբերութիւնների մէջ: Անտարբեր են դարձել մօտիկներն իրար հանդէպ, զգացումների բթուութիւն ամէնուրեք:

Այդ է պատճառը, որ մենք իրար ա՛յնքան մօտիկ աշխարհագրականօրէն³⁰, էլ չեմ ասում, սրտով, լուութիւն ենք պահում, թէեւ ես արդարանալու կռւան ունեմ, որովհետեւ քեզ երկու նամակ եմ գրել ու մնացել անպատասխան³¹:

Այս նախաբանից յետոյ հարցնում եմ.– ի՞նչ ես անում, սիրելի բարեկամ, ձայնդ երբեք չի լսում, մամուլի, գրականութեան մէջ³². Ի՞նչպէս է առողջութիւնդ, ո՞ւր ես, ի՞նչպէս է տիկինդ³³:

Շա՛տ վիրաւորւած եմ, որ 1921³⁴ թւին Վենետիկ էիր, ու չգրեցիր ինձ, որ գայի քեզ տեսնէի: Սոֆիան³⁵ էլ նոյնպէս շա՛տ վշտացած է քեզնից:

30 1925ին, Ն. Ադոնց Փարիզ կ'ապրէր:

31 Նամակները պահպանուած չեն:

32 Ըստ երևոյթիւն Խաւակեան տեղեակ չէր Ադոնցի «Անծանօթ էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների» ուսումնասիրութեան, որ սկսած էր լոյս տեսնել «Հանդէս ամսօրեայ»ի Մայիս-Յունիս 1925ի թիւին մէջ, շարունակուելով մինչև Նոյեմբեր-Դեկտեմբեր 1925ի թիւը: Առանձին հատորով տպուած է «Ազգային Մատենադարան» մատենաշարին մէջ (ԱԴՈՆՑ, Ն., Մաշթոց եւ նրա աշակերտները ըստ օտար աղբիւրների, Վիեննա 1925):

33 Օլգա Ադոնց-Յովնաթանեան (մահացած՝ 1935ին):

34 Ադոնց 1921ի աշման Լոնտոնէն փոխադրուած էր Փարիզ, սակայն 1923ին Արշակ Սաֆրաստեանին ուղղուած նամակը գրուած է Վենետիկէն (ԱԴՈՆՑ, Ն., Երկեր, նշ. աշխ., 98):

Գալով մեզ — մենք լաւ ենք. տղաս³⁶ մեծացել է. դէ մարդ է դարձել: Ես պարապում եմ. վերջացրել եմ մի մեծ վէպ: Հիմա արտագրում եմ, ուղղում, մշակում³⁷:

Շա՛տ եմ ձանձրացել ես Վենետիկից, բայց հնար չունեմ ինձ դուրս նետելու. մտադիր էի Հայաստան գնալ. այդ չի յաջողւում կամ յաջողւում է բարոյական մի ուրոյն տեսակի ինքնասպանութեամբ:

Կարճ եմ գրում քեզ չձանձրացնելու համար. խնդրում եմ մի երկտող գրես. կնոջս կողմից ջերմագին բարեւներ յարգելի տիկնոջդ ու քեզ. նոյնը եւ իմ կողմից:

**Մնամ քո՝
ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ**

A. Issahakian
2266, Dorsoduro de Marchi
Venezia

Բ.

Սիրելի Ն. Աղոնց,

Որոշել էի Հայաստան գալուս՝ Ձեզ մխիթարական բաներ գրել մեր ժողովրդի հոգեկան եւ նիւթական վերելքի մասին, բայց հազիւ մի 10 օր անցած, պատահեց տարերքի հարւածը — եւ Ալէքսանդրապոլը բազմաթիւ գիւղերով դարձաւ աւերակոյտ թաղելով հողի ու քարի տակ հարիւրաւոր մարդիկ, կենդանիներ

35 Սոփիա Քոչարեան-Իսահակեան (1882-1966), Աւետիֆ Իսահակեանի կինը:

36 Վիգէն Իսահակեան (1910-2005), շարժանկարի պատկերահան:

37 Կ'ակնարկէ «Ուստա Կարօ» վէպին, որմէ հատուածներ լոյս տեսած էին «Հայրենիք» ամսագրին մէջ, 1923ին: Իսահակեան, յետագային, հակառակ ամբողջացուցած ըլլալու յայտարարութեան, շարունակած է վէպը, որ եւ այնպէս անաւարտ մնացած է:

եւ հարստութիւններ³⁸: Ահագին, զարհուրելի աւեր ու աղէտ: Տասնեակ միլիոն ռուբլիի աւեր: Ոչ մի չափազանցութիւն խօսքերիս մէջ: Քաղաքի տները 70-75% կործանւած կամ այլեւս անբնակելի:

Յիշում ե՞ս մեր գիւղի (իմ գիւղի) ջրաղացը, մեր տունը – բոլորը, բոլորը աւերակ, բառացի, քարի ու հողի կոյտ. հիմքից պիտի վերանորոգել, եթէ դրամ լինի. այդպէս է բոլոր մեր վայրերը:

Ժողովուրդը, 70-80000 ապրում է բացօթեայ, սարսափած, զարհուրած: Խելագարութեան դէպքե՛ր:

Վախենում ենք որ Շիրակը՝ գեղ ու քաղաք, փախչի, ամալանայ. հարիւրաւորներով մարդիկ փախչում են, արդէն, լքելով ամէն բան. եթէ չուտ օգնութիւն չհասնի, հայկական այս գաւառն էլ կորած պիտի համարել:

Միտիթարականը այն է որ, առաջին ահա կոչին Խորհրդային Միութեան երկրներից սկզբնական օգնութիւն հասաւ: Մօտիկ վայրերից մօտ մի միլիոն ռուբլի, Թիֆլիզից, Բազուից, Ուկրաինից, Բելարուսիայից, Դաղստանից փող, սնունդ, գործիքներ, փայտեր եւայլն, եւայլն: Լայն չափսերի օգնութիւն հիմա պիտի կազմակերպւի, սակայն կարիքը բարձր է, գերազանց է բոլոր չափերից: Արտասահմանը անպատճառ եւ անյապաղ օգնութեան պիտի հասնի, անվերապահ, բոլորանէր:

Դժբախտ ժողովուրդ ենք, շնչաւոր ու անշունչ իրերից հարւածւած, բայց եւ շատ քաջ ու տոկուն ենք. աղէտի վայրերը եկած վրացիները զարմանում եմ տեսնելով, որ մեր գիւղացիները աւերակների տակից հանելով իրենց սիրելիներին՝ մի ձեռքով թաղում են, միւս ձեռքով հիւղակներ են շինում. ուրիշ մի ժողովուրդ մեր տեղը՝ բոլորովին կ'լքէր հայրենիքը եւ շունչը կառնէր Ռուսական հեռաւոր տափաստանները:

Սիրելի Ադոնց, ես կարճ եմ գրում. Դուք հիմա լրագրներից իմացած կ'լինէք մանրամասնութիւնները:

Խնդրում եմ Ձեզ, սակայն հարկ չկայ խնդրելու Ձեզ, այդ ամէնքդ լաւ էք հասկանում եւ խորապէս զգում – օգնութեան հասնել – հրամայականը:

38 Լեւոնակաւի (մինչեւ 1924՝ Ալեքսանդրապոլ) երկրաշարժը տեղի ունեցած է 22 նոյեմբեր 1926ին:

Ես եկայ իմ տնտեսութիւնը կազմելու բայց մի-երկու ընտանիքի մէջ ամէն ինչ զարկաւ: Մի երկու ամիս առաջ մեծ եղբայրս մեռել էր³⁹, եւ հիմա էլ միւս եղբայրս շա՛տ ծանր հիւանդ է⁴⁰, եւ նրանց ընտանիքները հիմա խեղճ, անտուն, աղքատ: Զրաղացը, տունը անկարող եմ վերաշինել, եւ անկարող եմ նրանց էլ պահել: մոլորած եմ... իսկ վրայ հասնողը ձմեռն է՝ ցուրտ ու դաժան, քաղց, հիւանդութիւններ... դժոխք կատարեալ:

Բարեկներով քո ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

30 հոկտեմբեր[եր] 1926,
Երեւան

Գ.

Փարիզ, 6 հոկտ. 1930 թ.

Պրն.

Ն. Ադոնցին,

Յարգելի հայրենակից,

Փարիզաբնակ խումբ մը գրողներ ունեցանք նախնական խորհրդակցութիւն մը, «Հայ Գրողներու Ընկերութիւն» հիմնելու նպատակով:

Պաշտօն ունինք հրաւիրելու նոր եւ աւելի ստւարաթիւ ժողով մը, ուր մանրամասն քննութեան պիտի ենթարկւին Ընկերութեան նպատակն ու կանոնադրական խնդիրները:

Ուստի, կը խնդրենք Ձեզմէ, յարգելի եղբայրակից, որ բարեհաճիք ներկայ գտնւիլ այդ խորհրդակցական ժողովին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի 13 հոկտ., երեկոյեան ժամը 9-ին, Քաֆէ Վոլթերի գետնայարկը⁴¹:

39 Ալեքսանդր (Ալեքսան) Իսահակեան (1850-1926) մահացած է Ապրիլ 1926ին:

40 Ռուբէն Իսահակեան (1857-1926) մահացած է Դեկտեմբեր 1926ին:

41 Café Voltaireը գոյութիւն ունեցած է ԺԹ. դարու սկիզբներէն մինչեւ Ի. դարու կէսերը Փարիզի ճող թաղամասին մէջ: Գրական, մշակութային ու քաղաքական անձնաւորութիւններու յայտնի հաւաքատեղի եղած է:

Ընդունեցէք, յարգելի պարոն եւ եղբայրակից, մեր անկեղծ յարգանքները:

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԱՆ⁴² Ղ. ՄԵԼՈՅԵԱՆ⁴³

Դ.

Փարիզ, 31 յունուարի 32 թ.

Սիրելի Ադոնց,

Նամակդ շնորհակալութեամբ ստացել եմ իր ժամանակին, հազար ներողութիւն մինչեւ հիմա չպատասխանելու համար: Սկզբում, յոյս ունէի, քո ասածին հիման վրա, որ նոր-տարւայ տօներին, Փարիզ պիտի գաս: Սպասեցինք: Յետոյ էլ՝ օրէցօր ձգելով՝ ուշացաւ: Տրամադրութիւնս էլ՝ միշտ յուր լինելով, օժանդակում էր յետաձգմանը:

Ես մի ամիս կայ՝ սկսել եմ պարապել. ահագին ուժ եմ գործ դնում վրաս՝ որ ամփոփեմ ու աշխատեմ. ոգեւորութիւն չկայ, եռանդ չկայ, բայց գրելով, գրելով մարդ ախորժակի է գալիս: Ահագին նիւթեր ունեմ, որոնց պէտք է յաղթահարել, մշակել, գրականացնել, եթէ կարելի է այսպէս ասել: Ժամանակով այդ ամէն կ'լինի, բայց առջեւս ուրիշ հարց է ցցւում, անպարտելի ու տիրական անհրաժեշտութիւն – Հայաստան վերադառնալ: Եւ այդ խանգարում է ամէն մի երկարաշունչ գործի, տեւական աշխատանքի: Ո՛չ թէ Հայաստանն է ինքնին, որ թեւաթափ է անում ինձ, այլ այն, որ տեղափոխելու հոգերով զբաղւած՝ աշխատանքս պիտի ընդհատուի: Գրադարանս ցիր ու ցան է՝

1956էն ետք դարձած է «Ճիւղմարիոն» հրատարակչատան գրականութեան բաժանմունքի կեդրոնատեղին:

42 Վահան Թէքէեան (1878-1945), արեւմտահայ հռչակաւոր բանաստեղծ եւ հանրային գործիչ:

43 Ղևոնդ Մելոյեան (1883-1967), ֆրանսահայ արձակագիր եւ բատերազիր:

Ժընեւ, Վենետիկ: Հաւաքել մի տեղ, կապել, կապկել: յետոյ էլ՝ Երեւանում մինչեւ հաստատուելը՝ ամիսներ եւ ամիսներ պիտի կլանեն ժամանակս եւ ուժերս: Դրա վրա եւ գումարի տնտեսական դժարութիւնները: Ահա այսպէս այս թափառականութեան մէջ անցաւ իմ անշուք կեանքը՝ անպտուղ եւ ժամավաճառ կերպով:

Եւ՝ ի տես այս ամէնին, դու խրատում ես ինձ, որ ես քաղցր աչքով նայեմ հայ բուրժուազիային (եւ բուրժուազիային առհասարակ) եւ Դաշնակցութեանը: Այս երկու չար, կործանիչ գորութիւններն էին, որ խորտակեցին ինձ, եւ ի՛նչ որ աստուած տւել էր ինձ – մի փոքր շնորհք, նա էլ հնարաւորութիւն չունեցաւ ուռճանալու: Եւ մնում է ինձ անմարելի մի տենչ այս երկու չար ուժերը, կարողացածիս չափով, արմատախիլ անեմ Հայաստանում: Բօլշեւիկեան պետութիւնը միակ ուժն է, որ կարող է իմ վրէժին գոհացում տալ: Իմ կեանքից բացի, հայկական ողբալի ներկայ, անշուշտ, անցեալ, վիճակը հետեւանք է հայ բուրժուազիայի ընչաքաղցութեան եւ Դաշնակցութեան լուպազութեան, արկածախնդրութեան:

Փարիզում, առանձին նորութիւններ չկան: Ես էլ քիչ եմ չփւռում այդ շրջանակների հետ. կամ զբաղւած եմ, կամ տխուր մտքերով պաշարւած: Մեր արեւը, հայ մտաւորականի արեւը, գէշ տեղ մայր մտաւ: Լսում եմ, որ ռուսահայ եւ թրքահայ վէճ կայ. անտագոնիստական նոր-նոր արտայայտութիւններ: Ես արհամարհում եմ երկու կողմն էլ: Ականջս Հայաստանի կողմն է՝ որտեղից միսիթարական նամակներ եմ ստանում – շինարարութեան, մշակոյթային ձեռնարկներ, պետական թատրոնի չէնքը բարձրանում է⁴⁴, հայկական օպերա են ստեղծում⁴⁵, հայոց պատմութիւն եւ հայ գրականութեան պատմութիւն են կազմում

44 1922-1938ին Հայաստանի Առաջին պետական թատրոնը (այժմ՝ Գաբրիէլ Սունդուկեանի անուան ազգային ակադեմիական թատրոն) գործած է այժմու Հանրապետութեան հրապարակի հիմնական շէնքերէն մէկուն մէջ: 1938ին փոխադրուած է այժմու վայրը (շէնքը այրած է 1962ին եւ վերաշինուած՝ 1966ին):

45 Օփերայի թատրոնը հիմնադրուած է 1932ին՝ Խոբիդային Հայաստանի կառավարութեան որոշումով: Սկիզբը գործած է Երեւանի բանուորական դրամատիկական թատրոնի շէնքին (այժմ՝ Ստանիսլաւսկիի անուան ռուսական թատրոնի շէնքը), իսկ 1940էն սկսեալ՝ Ալեքսանդր Թամանեանի նախագծով կառուցուած այժմու շէնքին մէջ:

բազմահատոր, զանազան հրատարակութիւններ (Սայեաթ-Նովա⁴⁶, Մեծարենց⁴⁷, Ե. Օտեան⁴⁸, Պարոնեան⁴⁹, Մուրացան⁵⁰, Աջառեան⁵¹ եւ ուրիշները):

Վիզէնը սինեմայի մէջ է աշխատում, ստաժ է անում⁵². Ի հարկէ առանց վարձատրութեան. բայց նորից լաւ է, որ մի բան է սովորում, Հայաստան կ'գործադրէ: Լաւ ենք, քաջքշուում ենք, տեսնենք՝ ինչ կ'լինի վերջերս:

Տիկնոջը չենք հանդիպել. չգիտենք Փարիզ է թէ՞ արդէն քեզ մօտ է: Լսեցինք, որ նրա եղբայրները ինչ-որ դատ չահել են:

Կրիզի⁵³ եւ գործազրկութեան հետեւանքով հայ գաղութի որոշ խաւերում մեծ նեղութիւն եւ կարիք կայ:

Շատ ուրախ եմ, որ ճգնաժամային օրերին դու ապահով գործ գտար⁵⁴:

Շատ բարեւներով քեզ իմ ու մերոնց կողմից,

քո՝ ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

46 ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱ, Հայերէն խաղերի լիակատար ժողովածու, Պետհրատ, Երեւան 1931: Ժողովածուի կազմողը՝ Գարեգին Լեւոնեան, օրինակ մը ուղարկած է Խաւահականին, որ արձագանգած է 7 Օգոստոս 1932ի նամակով. «Շատ լաւ հրատարակութիւն է: Լիակատար, սպառուած ուսումնասիրութիւն է քո արածը: Հաճոյքով կարդացի» (ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա., *Երկերի ժողովածու*, նշ. աշխ., 293):

47 ՄԵԾԱՐԵՆՑ, Մ., *Երկերի լիակատար ժողովածու*, Պետհրատ, Երեւան 1934:

48 ՕՏԵԱՆ, Ե., *Երկերի ժողովածու*, Պետհրատ, Երեւան 1935:

49 ՊԱՐՈՆԵԱՆ, Յ., *Քաղաքավարութեան վնասները*, Պետհրատ, Երեւան 1934:

50 ՄՈՒՐԱՑԱՆ, Ընտիր երկեր, 3 հտ., Պետհրատ, Երեւան, 1936:

51 ԱՃԱՌԵԱՆ, Հ., *Հայերէն արմատական քառարան*, 7 հտ., ԵՊՀ, Երեւան 1926-1935:

52 Վիզէն Խաւահական 1930ական թուականներու սկիզբներուն, մինչեւ Հայաստան վերադառնալը, աշխատած է ֆրանսացի նշանաւոր քեմիստի Ռընէ Գլէրի նկարահանման աշխատակազմին մէջ:

53 Կ'ակնարկէ 1930ի համաշխարհային տնտեսական տագնապին:

54 Կ'ակնարկէ Ադրնցի՝ Պրիւֆսէլի Ազատ համալսարանին մէջ ստանձնած հայագիտական ամպիոնի վարիչի պաշտօնին:

Summary

AVETIK ISAHAKIAN'S LETTERS TO NICOLAS ADONTZ

VARDAN MATIOSSIAN

The sixth volume of the collected works of famous poet Avetik Isahakian (1875-1957), published in 1979, included a distillation of his voluminous correspondence. The volume did not include any letter to Nicolas Adontz (1871-1942), an outstanding figure of Armenian historiography and philology, who was the poet's schoolmate at the Gevorgian Seminary of Holy Echmiadzin (1889-1891). However, Isahakian made various references to Adontz in his letters of the period 1913-1929. The author publishes four letters from Isahakian to Adontz, written between 1925 and 1932, which are kept in Adontz's file at the Hamazkayin archives in Beirut. The letters have been extensively footnoted and preceded by an introduction that comments and discusses their contents.